ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
«ՎԱՀԱԳՆԻԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ»
ՎԱՀԱԳՆԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

# *Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ν 37*

*«02» հոկտեմբերի 2017 թ.*

«Բերքի տոն 2017»-ի կապակցությամբ միջոցառումներ կազմակերպելու մասին.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասով

Վահագնի համայնքի ավագանին որոշեց.

Թույլատրել Վահագնիի գյուղապետին «Բերքի տոն 2017»-ի կապակցությամբ միջոցառումներ կազմակերպելու՝ կենդաղային և հանրային սննդի նյութեր ձեռք բերելու համար հարյուր հազար դրամ փոխանցել <<Նալբանդյան Եղբայրներ>> ՍՊԸ-ին Արարատ բանկ N1510007106170100:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մայիլյան Պետրոս | | | |
| Մքոյան Էդիկ | | | |
| Քոչինյան Գարեգին | | | |
| Քոչինյան Տելեմակ | | | |
| | | | |

**Վահագնի համայնքի ղեկավար** **Պ. Քոչինյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 02հոկտեմբերի 2017 թվականի N 35

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով Վահագնի համայնքի ավագանին որոշում է .

Հաստատել Վահագնի համայնքի ավագանու 2017թ.-ի հոկտեմբերի 2-ի նիստի օրակարգը:

Օրակարգ

Վահագնի համայնքի ավագանու 2017թ.-ի հոկտեմբերի 2-ի նիստի

1. «Բերքի տոն 2017»-ի կազմակերպական աշխատանքներն իրականացնելու համար միջոցներ տրամադրելու մասին:
2. «Բերքի տոն 2017»-ի կապակցությամբ միջոցառումներ կազմակերպելու մասին
3. Վահագնիի համայնքապետի ղեկավարի վարձատրության չափը, աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
4. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:
5.

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մայիլյան Պետրոս | | | |
| Մքոյան Էդիկ | | | |
| Քոչինյան Գարեգին | | | |
| Քոչինյան Տելեմակ | | | |
| | | | |

**Վահագնի համայնքի ղեկավար** **Պ. Քոչինյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
«ՎԱՀԱԳՆԻԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ»
ՎԱՀԱԳՆԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 36

« 0 2 » հոկտեմբերի 2017թ.

«Բերքի տոն 2017»-ի կազմակերպական աշխատանքներն իրականացնելու համար միջոցներ տրամադրելու մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասով.

Համայնքի ավագանին որոշեց՝

«Բերքի տոն 2017»-ի կազմակերպական աշխատանքներն իրականացնելու համար Վահագնի համայնքի 2017 թ.-ի բյուջեի բաժին 08 խումբ 2 դաս 4 հոդված 4819-ի միջոցներից փոխանցել <<ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ>> ՍՊԸ_ին Արարատ բանկ N1510007102170100:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մայիլյան Պետրոս | [signature] | | |
| Մքոյան Էդիկ | [signature] | | |
| Քոչինյան Գարեգին | [signature] | | |
| Քոչինյան Տելեմակ | [signature] | | |
| | | | |

Վահագնի համայնքի ղեկավար _______________ Պ. Քոչինյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վահագնի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Վահագնի, (0322)6 95 37 , vahagni.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

02 հոկտեմբերի 2017թվականի N 38-Ա

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՀԱԳՆԻԻ ՀԱՄԱՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 28-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ և 72-րդ հոդվածներով համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է.**

1.Հաստատել Վահագնի համայնքի ղեկավարի վարձատրության չափը, աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել Վահագնի համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 13-ի « Վահագնիի համայնքապետարանի ղեկավարի վարձատրության չափը, աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին » N 23-Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 02.10. 2017թ.:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մայիլյան Պետրոս | | | |
| Մքոյան Էդիկ | | | |
| Քոչինյան Գարեգին | | | |
| Քոչինյան Տելեմակ | | | |
| | | | |

Վահագնի համայնքի ղեկավար Պ. Քոչինյան

Հավելված 1
Վահագնի համայնքի ավագանու
2017 թվականի հոկտեմբերի 2-ի N 38 Ա որոշման

# ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ , ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 10
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 175000 |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 132000 |
| Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 129000 |
| Աշխատակազմի քարտուղար | 1 | 129000 |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ | 1 | 126000 |
| Աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ | 1 | 107000 |
| Աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ | 1 | 106000 |
| ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | |
| Վարորդ | 1 | 72800 |
| Պահակ | 1 | 72800 |
| Հավաքարար | 1 | 72800 |
| ընդամենը | 10 | 993300 |

Վահագնի համայնքի ղեկավար Պ. Քոչինյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Վահագնի համայնք, հասցե գ Վահագնի ,
հեռ.0322 6-95-37 էլ. փոստ՝ vahagni.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«02 » հոկտեմբերի 2017 թվական, 39 -Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասին, համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 20 -ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վահագնի համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 9-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Վահագնի համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.
2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն 'ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մայիլյան Պետրոս | [signature] | | |
| Մքոյան Էդիկ | [signature] | | |
| Քոչինյան Գարեգին | [signature] | | |
| Քոչինյան Տելեմակ | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ____________________ Պ. ՔՈՉԻՆՅԱՆ

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Վահագնի համայնքի ավագանու
2017 թվականի հուլիսի 03-ի N 30-Ա որոշման

## ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Սամվել Բեգլարյան երեսուն հազար դրամ, հարազատի հողարկավորության ծախսերի մասնակի հատուցման գումար :
2. Արթուր Աբրահամյան երեսուն հազար դրամ, հարազատի հողարկավորության ծախսերի մասնակի հատուցման գումար :
3. Կիրակոսյան Նոնա երեսուն հազար դրամ, երեխայի ծննդյան գումար:
4. Քոչինյան Ժաննա երեսուն հազար դրամ, երեխայի ծննդյան գումար:
5. Հակոբյան Հեղինե երեսուն հազար դրամ, երեխայի ծննդյան գումար:
6. Փանոսյան Սյուզաննա երեսուն հազար դրամ, երեխայի ծննդյան գումար:

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ____________ Ն.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
(ստորագրություն)